

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

Էստոնիայի պաշտպանության բարեփոխումների փորձը

- Հայաստանի պաշտպանության բարեփոխումներին նվիրված միջազգային սեմինարի համար
- 5-ը փետրվար, 2007 թ., Երևան

Շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն ընձեռեցիք ելույթ ունենալ Էստոնիայի անունից:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ջորջ Մարշալի անվան Անվտանգության ուսումնասիրությունների եվրոպական կենտրոնին և Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը այնպիսի կարևոր թեմայով խորհրդածողով կազմակերպելու համար, ինչպիսին Պաշտպանության նախարարության քաղաքացիականացումն է և «Պաշտպանության մասին» օրենքում փոփոխությունների կատարումը: Պաշտպանության և անվտանգության ոլորտը բարեփոխելու՝ Հայաստանի պատրաստակամությունը հստակորեն վկայում է այն մասին, որ երկիրը մտադիր է շարունակել համագործակցությունն անվտանգության եվրո-ատլանտյան կառույցների հետ: Այսպիսով, ինձ մեծ պատասխանատվություն է բաժին ընկնել՝ ներկայացնելու այս ոլորտում Էստոնիայի փորձը և եվրո-ատլանտյան ինտեգրման ընդհանուր փորձը:

Մոտ տաս տարի առաջ Էստոնիայի պաշտպանության համակարգի առջև և այսօրվա Հայաստանի առջև կանգնած հիմնախնդիրների համեմատությունը ցույց է տալիս, որ ակնհայտորեն գոյություն ունեն մի շարք լուրջ տարբերություններ:

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

Նախևառաջ, մեր պաշտպանության համակարգի բարեփոխումների հիմնական կողմնորոշումը ՆԱՏՕ-ին անդամակցելն էր: Իհարկե, մենք բարեփախտաբար չունեինք զինված հակամարտություն, ի տարբերություն Լեոնային Ղարաբաղի, չնայած որ վերջինս ներկայում համարվում է սառեցված հակամարտություն: Այնուհանդերձ, չնայած այդ տարբերություններին, վստահ եմ, որ մեր փորձը կարող է նաև Ձեր բարեփոխումների համար օգտակար լինել:

Այսօր նախևառաջ կցանկանայի ընդգծել այնպիսի առանձնահատկությունների երեք տեսակներ, որոնց պետք է անդրադառնալ անցումային գործընթացում, որը մեր պարագայում ինտեգրումն է ՆԱՏՕ-ին, ապա՝ խոսել այս գործընթացում կադրային քաղաքականության իրականացման շուրջ:

Ամենակարևոր՝ «հոգեբանական» խնդիրները

Էստոնիան մեծ ցանկություն ունի՝ օժանդակել Հայաստանին: Մենք բարձր ենք գնահատում մեր պետությունների բարեկամությունը և համագործակցությունը: Կարող եմ վստահեցնել Ձեզ, որ մինչ այսօր համագործակցությունը փոխադարձաբար շահավետ է եղել և, որպես այս բարեփոխումները տաս տարի առաջ իրականացրած պետություն, մենք ցանկանում ենք շարունակել գործնական մակարդակում մեր համագործակցության խորացումը:

Մեր այսօրվա վիճակին հասած չէինք լինի առանց մեր ընկերների օժանդակության: Այս սեմինարը ցույց է տալիս, որ Դուք նույնպես կարողացել եք սերտ կապեր հաստատել բազմաթիվ բարեկամական պետությունների հետ: Մեր փորձից հասկացել ենք, որ գործընկերների հետ

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար

5-ը փետրվար, 2007 թ.

պաշտպանության բարեփոխումներ քննարկելուց առաջ անհրաժեշտ է ունենալ հստակորեն ձևակերպված սկզբունքներ:

Ըստ իս, անհրաժեշտ է լրջորեն վերաբերվել հետևյալ հիմնարար սկզբունքներին.

- Տվեք միայն այնպիսի խոստումներ, որոնք կկարողանաք կատարել,
- Մի օգտագործեք ժխտողական (կամ ինքնաքայքայիչ) փաստարկներ, քանի որ դրանք երբևէ արդյունք չեն տա և չեն նպաստի Ձեր նպատակների իրագործմանը,
- Մի փնտրեք ինչ-որ բան չանելու արդարացումներ, քանի որ այս պայմաններում բողոքելով և ուրիշներին մատնացույց անելով ոչինչ չեք ստանա,
- Երբեք մի օգտագործեք պատմությունը որպես փաստարկ:

Մեր փորձից գիտենք, որ երբեմն բավական դժվար է հավատարիմ մնալ այս սկզբունքներին: Սակայն, վերջին հաշվով, դրանք կտան ցանկալի արդյունքներ:

Պաշտպանության բարեփոխումների ամենակարևոր «տակտիկական» առանձնահատկությունները

Խիստ կարևոր է պաշտպանության բարեփոխումներ իրագործելու համար քաղաքական կամքի և բոլոր խոշոր քաղաքական կուսակցությունների միջև փոխհամաձայնության առկայությունը: Քննարկելով Էստոնիայի պաշտպանության բարեփոխումները, պետք է մտապահեք, որ այդ ժամանակ մենք ձգտում էինք դառնալ ՆԱՏՕ-ի անդամ: Միայն կլիներ ասել, թե մենք մեր Պաշտպանության ուժերը բարեփոխել ենք ՆԱՏՕ-ի կամ վերջինիս անդամ պետությունների թելադրանքով: Բնավ ոչ: Էստոնիայի

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

հասարակությունը հստակորեն հասկանում էր, որ պաշտպանական արդյունավետ կառուցվածք ձևավորելու համար անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ:

Սակայն, ինչպես գիտենք, բարեփոխումներ իրականացնելը երբեմն իսկապես ցավոտ է, որը նշանակում է, որ շատերը դեմ կլինեն բարեփոխումներին:

Պետք է ընդունենք, որ մեր պարագայում շատ ավելի հեշտ էր իրականացնել այս բարեփոխումներից շատերը (որոնք հակառակ դեպքում կարող էին ժողովրդի համար անընդունելի լինել), քանի որ բարեփոխումների ողջ գործընթացը սերտորեն կապակցված էր ՆԱՏՕ-ի անդամ դառնալու գաղափարին: Հաշվի առնելով, որ ՆԱՏՕ-ին անդամակցելու գաղափարին կողմ էր ընտրազանգվածի մեծ մասը (տարբեր սոցիալական հարցումների համաձայն՝ քվեարկողների 75-85 տոկոսը), նույնիսկ ընդդիմադիր կուսակցությունները չէին ցանկանում բարեփոխումների հակառակորդի տպավորություն թողնել:

ՆԱՏՕ-ին Էստոնիայի անդամակցությունը հիմնականում հնարավոր դարձավ շնորհիվ Էստոնիայի բոլոր խոշոր քաղաքական կուսակցությունների կողմից ՆԱՏՕ-ի նկատմամբ ընդհանուր առմամբ դրական տրամադրվածության: 1994 թ. Էստոնիայից ռուսական (նախկին խորհրդային) զորքերի դուրսբերումից հետո Էստոնիայի խորհրդարանում ներկայացված բոլոր խոշոր կուսակցությունները պաշտոնապես պայմանավորվեցին ռազմական զարգացումներն ուղղորդել ՆԱՏՕ-ի հետ փոխգործակցությանը: 1998-2004 թթ. կառավարություն ձևավորող բոլոր կոալիցիոն համաձայնագրերի մեջ նշվել է այն փաստը, որ Էստոնիայի անվտանգության ու պաշտպանության քաղաքականության հիմնական գերակայություն է համարվում անդամակցությունը ՆԱՏՕ-ին:

2. **ՆԱՏՕ-ի և ընդհանուր առմամբ պաշտպանության խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը** շատ կարևոր հանգամանք է եվրո-ատլանտյան համայնքին ինտեգրվելու գործընթացում: Գտնում ենք, որ հատկապես կարևոր է ապահովել հանրության համաձայնությունը պաշտպանության բարեփոխումներին և ՆԱՏՕ-ի հետ ինտեգրման գործընթացին: Ինչպես արդեն նշել եմ, դա մեզ մոտ ստացվեց: Պարբերաբար անցկացնում էինք հասարակական կարծիքի հարցումներ: 1999 թ. ի վեր ՊՆ և ԱԳՆ մամլո և տեղեկատվության վարչությունները հիմնականում աշխատում էին պաշտպանության քաղաքականության և ՆԱՏՕ-ի հետ կապված թեմաների շուրջ հանրության իրազեկության բարձրացման ուղղությամբ: ՆԱՏՕ-ի և պաշտպանության խնդիրների վերաբերյալ հասարակական կարծիքի հարցումները շարունակվում են նույնիսկ այսօր:

3. Ինտեգրումը ՆԱՏՕ-ին շատ սերտորեն կապված է **քաղաքացիական հասարակության ստեղծմանը**: Էստոնիայի քաղաքացիական հասարակության զարգացման հայեցակարգը, որը մեր խորհրդարանի կողմից հաստատվեց 2002 թ., նպաստեց ինտեգրման գործընթացի սահուն իրականացմանը: Հայեցակարգը պետք է նպաստեր հասարակական միավորումների զարգացմանը, որոնց խնդիրը պետք է լինի բոլոր բնակիչներին ներգրավելու միջոցով ժողովրդավարական գործընթացի շարունակականությունն ապահովելը:

Պաշտպանության բարեփոխումների իրականացմանը հանրության օժանդակությունը ստանալու համար կարևոր է աշխատել հանրության լայն խավերի և հասարակական կազմակերպությունների հետ:

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

4. Անհրաժեշտ է քննարկել և քաղաքական ամենաբարձր մակարդակով, ոչ միայն՝ ՊՆ-ի շրջանակներում, լուծել ժողովրդավարական կառավարման հարցերը: Պետք է հստակորեն հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում **ժողովրդավարական հսկողության համակարգը**, և թե ինչպես է այն կառավարվելու՝ Նախագահի մակարդակից մինչև կառավարություն և զինված ուժեր:

5. Կարևոր է ունենալ **ինստիտուցիոնալ երաշխիքներ**, որոնք կապահովեն պլանների իրագործումը: Ամուր հենքի վրա դրված ինստիտուցիոնալ մեխանիզմները և կառույցները չպետք է ընտրությունների հերթական փուլից հետո վերանան:

6. **Կադրային ներդրումներ:** Կադրային քաղաքականության մասին կլիտսեմ մի փոքր անց, բայց այժմ կցանկանայի ընդգծել մասնագիտական հմտությունների և լեզվական (անգլերեն և ֆրանսերեն) կարողությունների զարգացման կարևորությունը: Պաշտպանության և անվտանգության ոլորտներում անգլերենի վերապատրաստման լայնածավալ ներդրումը և ՆԱՏՕ-ի կողմից պահանջվող՝ լեզվական կարողությունների համապատասխան մակարդակի ապահովումը շատ կարևոր է: Անգլերեն պետք է սովորեն և բարձրաստիճան, և մյուս սպաները: Դա նրանց թույլ կտա ներգրավվել միջազգային համագործակցությանը, խաղաղապահ գործունեությանը և այլն:

Բացի այդ, շատ կարևոր է երաշխավորել կարերայի հավասարակշռված համակարգ Հայաստանի լավ պատրաստված և կրթված սպաների համար:

7. **Լայն աշխարհայացքով անկեղծ հաղորդակցություն արևմտյան խորհրդականների հետ.** խորհուրդ հարցրեք նրանցից, հստակ և անկեղծ հարցեր ուղղեք նրանց, և լայն աշխարհայացքով ընդունեք նրանց խորհուրդները, քանի որ կարիք չկա ուրիշների թույլ տված սխալները:

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար

5-ը փետրվար, 2007 թ.

«Քաղված դասերը» կարող են մեծ դեր խաղալ բարեփոխումների գործընթացում:

Թափանցիկությունը և բաց գործելակերպը Ձեր կողմից շատ կարևոր է, որպեսզի օտարերկրացի փորձագետները պատրաստ լինեն օգնել և խորհուրդներ տալ:

Անդամակցության գործողությունների ծրագրի (ԱԳԾ)

առանձնահատկությունները

ՆԱՏՕ-ի կողմից առաջարկվող տարբեր ձևաչափերն արդյունավետորեն օգտագործելու նպատակով մենք առավել արժեքավոր համարեցինք դրանցից երկուսը՝ Պլանավորման և վերանայման գործընթացը (ՊՎԳ կամ PARP) և Անդամակցության գործողությունների ծրագիրը (ԱԳԾ կամ MAP): ՊՎԳ-ին, իսկ ավելի ուշ՝ նաև ԱԳԾ-ին մասնակցելու շնորհիվ մեր պաշտպանության ոլորտում քաղաքականություն պլանավորողները և զինվորականները ծանոթացան կոլեկտիվ պլանավորման սկզբունքներին:

Իհարկե, Հայաստանը չի պահանջել Անդամակցության գործողությունների պլան, սակայն Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ հաստատել է Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր (IPAP), որի կապակցությամբ, հուսով ենք, Ձեզ համար կարևոր կլինի մեր ԱԳԾ-ի փորձը:

Եվրո-ատլանտյան գործընկերության խորհրդի գումարման ընթացքում 1999 թ. Բրյուսելում տեղի ունեցած պաշտպանության նախարարների նիստի ժամանակ ունեցած ելույթի ընթացքում Էստոնիայի նախկին Պաշտպանության նախարար պրն. Յուրի Լյուիկն ասել է. «Էստոնիայի Ազգային ամենամյա ծրագիրը (ԱԱԾ) պաշտպանության վերաբերյալ

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

ամենաձավալուն և ընդգրկուն փաստաթուղթն է, որը հաստատվել է մինչ օրս էստոնիայի կառավարության կողմից: ԱԳԾ-ն մեզ շահագրգռել է՝ վերանայելու մեր պլաններն անվտանգության և պաշտպանության ոլորտներում, և սերտացնելու համագործակցությունը պետական տարբեր գերատեսչությունների միջև»:

Ինչու է այդքան կարևոր ԱԳԾ-ն

ԱԳԾ-ին մասնակցելու շնորհիվ մենք պլանավորման ու իրագործման փորձ քաղեցինք: ԱԳԾ-ն մեզ օգնեց սահմանել նպատակներ, խնդիրներ, կառույցներ, միջոցներ, պարտականություններ և ժամկետներ:

Նախ, մենք իմացանք, որ ԱԳԾ-ի և ԱԱԾ-ի նպատակները պետք է չհակասեն պլանավորման այլ փաստաթղթերին: ՆԱՏՕ-ին ներկայացվող գնահատողական բոլոր փաստաթղթերը պետք է համահունչ լինեն:

Երկրորդ, պետական մարմիններում ՆԱՏՕ-ի հետ գործ ունեցող մարդիկ պետք է պատրաստ լինեն թիմային աշխատանքի: Մեր փորձը ցույց է տվել, որ անհրաժեշտ է շատ սերտ համագործակցություն ԱԳՆ-ում ՆԱՏՕ-ի վարչության, ՊՆ-ի, Գլխավոր շտաբում ՆԱՏՕ-ի բաժնի և Բրյուսելում պետության առաքելության պաշտպանության ծառայության միջև:

ԱԱԾ-ի հիմնական դրական ազդեցությունը եղել է այն փաստը, որ այն էստոնիային տվել է պաշտպանության և անվտանգության քաղաքականության ոլորտում ներքին համակարգման և զեկուցման աշխատող համակարգ: Այն հստակեցրել է պաշտպանության պլանավորման էստոնական համակարգը: ԱԱԾ-ի հինգ փուլեր (1999-2003 թթ.) բարեհաջող ավարտելու շնորհիվ միջգերատեսչական որոշակի մեխանիզմ է ձևավորվել կառավարական մակարդակով անվտանգության

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

խնդիրներ քննարկելու համար, որը նպաստել է վարչական համագործակցության բարելավմանը: Պատասխանատու բոլոր գերատեսչությունները տարեկան երկու անգամ զեկուցել են վարչապետին:

ԱԱԾ-ով նախատեսվում է Էստոնիայի երկու համապատասխան հանձնաժողովների միջգերատեսչական համագործակցության կարգը, ինչպես նաև ԱԱԾ-ն մշակելու ընթացքում նրանց միջև պարտականությունների բաժանումը:

ՆԱՏՕ-ի ինտեգրման հարցերով կառավարական կոմիտեն ստեղծվել է 1999 թ. օգոստոսին՝ նպատակ հետապնդելով քննարկել պաշտպանության քաղաքականության հիմնախնդիրները և քաղաքական ամենաբարձր մակարդակով որոշումներ ընդունել ՆԱՏՕ-ին ինտեգրվելու վերաբերյալ: Կառավարական հանձնաժողովի կազմը հետևյալն է եղել. Վարչապետ (Հանձնաժողովի նախագահ), Պաշտպանության նախարար, Արտաքին գործերի նախարար, Ֆինանսների նախարար, Ներքին գործերի նախարար, Արդարադատության նախարար, Տնտեսական գործերի և հաղորդակցության նախարար (2003 թվականից) և Պաշտպանության շտաբի պետ:

Կառավարական հանձնաժողովի հիմնական պարտականությունները ներառել են ՆԱՏՕ-ի հետ Էստոնիայի համագործակցության ծրագրերի քննարկումը, պաշտպանության և անվտանգության քաղաքականությունների ներդաշնակեցված առաջարկների մշակումը և ներկայացումը Կառավարությանը, և ԱԱԾ-ների գնահատումը և հաստատումը:

ՆԱՏՕ-ի ինտեգրման հարցերով միջգերատեսչական փորձագիտական հանձնաժողովը ստեղծվել է 1998 թ. հուլիսին՝ նպատակ հետապնդելով

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

քննարկել ՆԱՏՕ-ին ինտեգրվելու հետ կապված հիմնախնդիրներ և փորձագետների մակարդակով կայացնելու անհրաժեշտ որոշումներ: Փորձագիտական հանձնաժողովի կազմում եղել են հետևյալ գերատեսչությունների ներկայացուցիչներ. Պաշտպանության նախարարություն, Պետական քարտուղարություն, Գլխավոր շտաբ, Արտաքին գործերի նախարարություն, Փրկարարական վարչություն, Սահմանապահ գվարդիա, Ֆինանսների նախարարություն, Ներքին գործերի նախարարություն, Նախագահի աշխատակազմ, Խորհրդարան, Արդարադատության նախարարություն, Տնտեսական գործերի և հաղորդակցության նախարարություն:

Փորձագիտական հանձնաժողովի հիմնական պարտականությունները ներառել են Էստոնիա-ՆԱՏՕ համագործակցության ընդհանուր խնդիրների մշակումը, վերլուծությունը և գնահատումը, համապատասխան զեկույցների և առաջարկների ներկայացումը Կառավարական հանձնաժողովին, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հետ Էստոնիայի երկխոսության համակարգումը:

Նշված երկու հանձնաժողովները վերահսկվել և ֆինանսավորվել են Պաշտպանության նախարարության կողմից:

ՆԱՏՕ-ին ինտեգրվելու հետ կապված միջգերատեսչական աշխատանքն արդյունավետորեն համակարգելու նպատակով անհրաժեշտ է ունենալ ՆԱՏՕ-ին անդամակցելու գործընթացի ազգային նախապատրաստական աշխատանքը համակարգող կենտրոնական մարմին: Էստոնիայում այդ մարմինը Պաշտպանության նախարարության Պաշտպանության քաղաքականության գլխավոր վարչությունն էր:

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

Պահանջվում էր սերտ միջգերատեսչական համագործակցություն, քանի որ յուրաքանչյուր բնագավառում անհրաժեշտ էր տարաբնույթ պետական մարմինների մասնակցությունը: Ծագող բոլոր հարցերը լուծվում էին ՆԱՏՕ-ի ինտեգրման հարցերով միջգերատեսչական փորձագիտական հանձնաժողովի շրջանակներում:

ԱԳԾ գործընթացի շնորհիվ խորհուրդներ տրվեցին և աջակցություն ցուցաբերվեց Էստոնիայի պաշտպանական համակարգի զարգացման գործում, քանի որ պետական տարբեր մարմիններ սերտորեն համագործակցեցին՝ նպատակ ունենալով երկիրը դարձնել ՆԱՏՕ-ի անդամ: ՆԱՏՕ-ի անդամ դառնալու ցանկությունն էր խրախուսում նաև միջգերատեսչական համագործակցությունը:

ԱԱԾ-ով նախատեսված պարտականությունների բարեհաջող կատարման արդյունքում Էստոնիան դարձավ ՆԱՏՕ-ի անդամ:

Կադրային քաղաքականությունը և պաշտպանության ոլորտի վերափոխումը

1991 թվականին անկախությունը վերականգնելուց հետո ստիպված էինք Պաշտպանության նախարարությունը և մեր զինված ուժերը ստեղծել «զրոյից»: Խորհրդային բանակում ծառայող՝ ազգությամբ Էստոնացի սպայական անձնակազմը համեմատաբար փոքր էր. ուստի, մենք անցյալից շատ բան չէինք ժառանգել:

Սա և դրական, և բացասական ազդեցություն ունեցավ: Սկզբնական շրջանում մասնագիտական կադրերի լուրջ պակաս էինք զգում: Երկար տարիներ պահանջվեցին որակյալ քաղաքացիական ու զինվորական մասնագետներ պատրաստելու համար: Եվ, չնայած որ իրավիճակն այդ

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

Ժամանակվա համեմատ կտրականապես բարելավվել է, պետք է խոստովանեմ, որ մինչ օրս էլ զգում ենք մասնագետ կադրերի պակաս, հատկապես այն բանից հետո, երբ բավական մեծ թվով սպաներ և քաղաքացիական ծառայողներ պաշտոնի նշանակվեցին ՆԱՏՕ-ի գլխավոր շտաբում:

Այնուհանդերձ, «զրոյից» սկսելն ունեցավ նաև որոշ առավելություններ: Մենք երբեք ստիպված չեղանք հաղթահարել Պաշտպանության նախարարության քաղաքացիականացման խնդիրը: Մեր Պաշտպանության նախարարությունը ստեղծվեց 1992 թվականին՝ որպես քաղաքացիական կազմակերպություն: Ընդհակառակը. անձամբ ես գտնում եմ, որ մեզ անհրաժեշտ է ավելացնել ՊՆ-ում աշխատող սպայական անձնակազմի թվաքանակը: Ներկայում մեր 240 աշխատակիցներից ընդամենը 14-ն են զինվորականներ, ընդ որում, 1992 թվականին այդ թիվն ավելի փոքր էր, սակայն նույնիսկ 14-ը դեռ չի կարելի բավարար համարել:

Մեկ տասնամյակ շարունակ նախարարությունը գրեթե ամբողջությամբ համալրված էր քաղաքացիական կադրերով, իսկ Գլխավոր շտաբը, բնականաբար, սպայական անձնակազմով: Գիտնական պետք չէ լինել՝ հասկանալու համար, որ զինվորականների և քաղաքացիականների մտածելակերպը երբեմն բավական տարբեր է, և երկու տարբեր շենքերում, երկու տարբեր կազմակերպություններում զինվորական ու քաղաքացիական անձնակազմի առանձին աշխատելու հանգամանքն անխուսափելիորեն կարող է որոշ դեպքերում «անառողջ» մրցակցություն առաջացնել:

Այսպիսով, անկախությունից ավելի քան տասնհինգ տարի անց, պաշտպանության բարեփոխումների մեկնարկից մոտ տաս տարի հետո, մենք դեռ մեծ ջանքեր ենք գործադրում, որպեսզի Պաշտպանության

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

նախարարությունում ճիշտ կերպով հավասարակշռենք քաղաքացիական և զինվորական անձնակազմը:

Կցանկանայի ընդգծել մեկ խնդիր. ամերիկյան առաջատար հետազոտական կենտրոններից «Anders Aslund» կենտրոնը մի քանի անգամ նշել է, որ Էստոնիայի հաջողությունը շատ բանով կախված է եղել քաղաքացիական ծառայության կայունությունից: 1993 թվականին Էստոնիայի խորհրդարանն ընդունել է «Կառավարության մասին» օրենք, որն էլ հիմք է ծառայել նշված կայունության ապահովման համար: Այս օրենքի համաձայն, նախարարը ողջ նախարարության կազմում միակ քաղաքական պաշտոնյան է: (Իհարկե, նախարարը կարող է ունենալ երկու կամ երեք քաղաքական խորհրդական, սակայն վերջիններս չեն խառնվում նախարարության առօրյա աշխատանքին:) Մշտական է նախարարության Աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, ինչպես նաև կառավարական գերատեսչությունների ղեկավարները, որոնք, անկախ նախարարի փոխարինումից, պահպանում են իրենց պաշտոնները: Օրինակ, վերջին վեց տարվա ընթացքում Էստոնիայի պաշտպանության նախարարը հինգ անգամ փոխվել է, իսկ Աշխատակազմի ղեկավարը՝ ընդամենը երկու անգամ: Որքան գիտեմ, Լատվիայի Պաշտպանության նախարարության ներկայիս Աշխատակազմի ղեկավարը զբաղեցնում է տվյալ պաշտոնն արդեն ավելի քան տաս տարի:

Այս ամենի արդյունքում ձևավորվել են շահագրգիռ և խիստ արհեստավարժ քաղաքացիական ծառայողներ, որը նաև ապահովել է պետական գործընթացների շարունակականությունը:

Ցանկանում են կրկին շնորհակալություն հայտնել կազմակերպիչներին և ընդգծել, որ մինչ այժմ տեսածիս հիման վրա շատ դրական կարծիք են

Մարշալի անվ. կենտրոն
Հայաստանի պաշտպանության բարեփոխումների սեմինար
5-ը փետրվար, 2007 թ.

կազմել: Շատ լավատեսորեն են գնահատում Ձեր նպատակների
իրագործելիությունը:

Հավատում եմ Ձեր ապագային: Հաջողություն եմ մաղթում Ձեզ: